ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

- ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՂ
- ՕՊԵՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ
- ՌԱԴԻՈՄԵԽԱՆԻԿ
- ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ
- ԳՈՐԾԱՎԱՐ
- ԽՈՀԱՐԱՐ
- ՈՍԿԵՐԻՉ

2018-2019

I կիսամյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հաղթական քայլեր».....3
«Այցելություն Գյումրու Լեզուների Տուն».....6
«Այցելություն Գյումրու արյան փոխներարկման կայան»9
«Այցելություն «Ալվան ծաղիկ» կենտրոն ՀԿ» 12
Բաց դաս՝ «Հայկական ազատամարտը և ֆիդայական շարժումը».....14
«Այցելություն Ասլամազյան քույրերի թանգարան» 17
«Այցելություն Գյումրու «Լենտեքս» գործարան».....20
Ֆիլմի դիտում՝«Գարեգին Նժդեհ».....23
«Այցելություն՝ Գյումրու «ԷՄԻԼԻ ԱՐԵԳԱԿ» կենտրոն» 26
Ազգային մրցույթ՝ «Հայաստանի հմտություններ 2018».....29
Բաց դաս «Ոսկյա իրեր և զարդեր».....32
«Մասնագիտական ֆիլմադարանը համալրվում է....» 33
Բաց դաս՝ «Խորհրդավոր ձայնը» 35
Միջոցառում՝ «Քեզ համար Ազնավուր» 38
Սեմինար՝ «Ես կարող եմ պաշտպանվել երկրաշարժից».....41
«Այցելություն ոսկերչական արհեստանոց» 42
Միջոցառում՝ «20-դարի արգելված գրականություն՝ Աննա Ախմատովա».....45
Միջոցառում՝ «Մեջքդ շտկե՛ Գյումրի քաղաք» 48
Բաց դաս՝ «Իմ մասնագիտությունը վարսավիրական արվեստն է».....51
Սեմինար-պարապմունք՝ «Ֆուտբոլը դպրոցներում» 55
Տեսանյութի դիտում՝ «Արարատ 73-ի 45-ամյակ».....57
Մրցաշար՝ «Լինենք առողջ մարմնով և հոգով».....59
«Վոլեյբոլի մրցաշար՝ նվիրված 1988 երկրաշարժի 30-ամյակին».....62
Այցելություն՝ «Զինծառայողների դաշտային պարապմունքներ».....66
«Միջոցառում՝ նվիրված «Հրթիռային զորքերի և հրետանու օրվան» 68
«Մեկ օր զորամասում».....71
«ճանաչողական այց՝ «Մագնոն» մետաղաձուլական արտադրամաս».....75
«Այց կահույքագործության ու փայտի մշակման արտադրամաս».....76
«ճանաչողական այց «ԼԵՆՏԵՔՍ» գործարան 77
Մասնակցություն «Աշխատանքի տոնավաճառ» 78
Դասընթաց՝ «Կարիերայի կառավարում» 79
Սեմինար՝ «Քայլ դեպի ներառական կրթություն».....80
Դասընթաց՝«Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն».....81
Դասընթաց՝ «Հաղորդակցման կարողությունների ձևավորում» 82
Դասընթաց՝«Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն».....83
«Հանդիպում Շիրակի մարզպետի տեղակալ Սոֆիա Հովսեփյանի հետ» 84
Դասընթաց՝«Առաջնորդման և ղեկավարման հմտություններ».....85
Այցելություն՝ «Բոն Ապետի» հացի սոցիալական արտադրամաս» 86

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08. 2018թ.
Բնագիտամաթեմատիկական մ/մ նախագահ՝ Զ. Նահապետյան

Հաղթում են միայն նրանք, ովքեր մարտնչում են:
Գ.Նժդեհ

<Հաղթական քայլեր> խորագրով ինտելեկտուալ խաղ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին

Անցկացման ամսաթիվը՝ 28.09. 2018թ.

Նպատակ

- Բարձրացնել ուսանողների ռազմահայրենասիրական ոգին:
- Ամրապնդել ուսանողների գիտելիքները «20-րդդարի Ավարայր»-ի վերաբերյալ:
- Արժևորել ազգի պատմական ձեռքբերումները:
- Նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը:
- Զարգացնել ուսանողների թիմում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակությունը:

Կատարման ընթացք

1. Նախապատրաստական աշխատանքներ

- 1918 թ. Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրում և հանդիպումների ընթացքում իրազեկում ուսանողներին
- Թիմերի ձևավորում և անունների որոշում
- Կազմակերպչական և գնահատման հանձնախմբերի ձևավորում
- Մրցույթի կանոնակարգի կազմում
- Ինտելեկտուալ մրցույթի հարցերի մշակում
- Գեղարվեստական համարների ընտրություն, ուսուցանում
- Թեմատիկ տեսանյութի պատրաստում

2. Անցկացում

- Միջոցառման մեկնարկ
- Տեսանյութի դիտում
- Մրցույթի անցկացում 2 փուլով
- Փուլերի ընդմիջումներ՝ հայրենասիրական երգ ու պարով
- Արդյունքների ամփոփում և գնահատում
- Պատվոգրերի հանձնում

Արդյունք

- Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի վերաբերյալ գիտելիքները հարստացրած և ազատագրական պայքարի հերոսների օրինակով դաստիարակված ուսանողներ: Տրամաբանական մտածողությամբ զարգացած ուսանողներ:

Ընթացքը.

I մաս

Հիմնական փուլ /խաղի անցկացում/

II մաս

Արդյունքների ամփոփում

Կազմակերպիչ՝ Ռ. Պետրոսյան

Լուսաբանում

«Հաղթական քայլեր»

28.09.2018թ. թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Հաղթական քայլեր» խորագրով ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին: Մրցույթին մասնակցում էին բոլոր կուրսերի հավաքական թիմերը: Յուրաքանչյուր թիմ կազմված էր հինգ մասնակցից և ուներ իր անվանումը:

- I կուրսերի հավաքական առաջին թիմ՝ «Ազատություն»
- I կուրսերի հավաքական երկրորդ թիմ՝ «Սարդարապատ»
- II կուրսերի հավաքական թիմ՝ «Արծվասիրտներ»
- III կուրսերի հավաքական թիմ՝ «Բազե»
- միամյա կուրսերի հավաքական թիմ՝ «Իմաստասեր»

Մրցույթի նպատակն էր արժևորել ազգի պատմական ձեռքբերումները, բարձրացնել ուսանողների ռազմահայրենասիրական ոգին, ամրապնդել գիտելիքները «20-րդ դարի Ավարայր»-ի վերաբերյալ, նպաստել ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը, զարգացնել թիմում աշխատելու կարողությունները և կազմակերպել նրանց նպատակային ժամանցը:

Մինչ միջոցառման մեկնարկը, ցուցադրվեց տեսանյութ, որում համառոտ ներկայացվեց 1918 թվականին Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Մրցույթն անցկացվեց երկու փուլով՝ ընդմիջվելով երաժշտական համարներով:

Վերջում գնահատող հանձնախումբը կատարեց խաղի արդյունքների ամփոփում և պարգևատրում:

Ըստ ցուցաբերած արդյունքների՝ մրցանակային տեղերը համապատասխանաբար զբաղեցրեցին հետևյալ թիմերը.

I տեղ - «Արծվասիրտներ» / II կուրսերի հավաքական թիմ/,

II տեղ - «Ազատություն» / III կուրսերի հավաքական թիմ/,

III տեղ - «Իմաստասեր» /<միամյա կուրսերի հավաքական թիմ/:

Մրցույթի կազմակերպիչ՝ Ռ.Պետրոսյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08. 2018թ.
Հումանիտար մ/մ նախագահ՝ Ք. Գրիգորյան

Պլան

Գյումրու Լեզուների Տուն այցելության
(նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին)

Առարկա– անգլերեն
Կուրս- I. II.III

Բաց դասի նպատակը.

- Ուսանողներին ծանոթացնել ժամանակակից թարգմանչական գործին, թարգմանական գրականության տեսակներին, ժամանակակից հայ թարգմանիչների գործերին:
- Գնահատել ու արժևորել թարգմանական գործի կարևորությունն ու անհրաժեշտությունը մշակույթի տարածման և պահպանման գործում:

Նախապատրաստական աշխատանքներ.

- այցելության համար նախնական պայմանավորվածության ձեռքբերում,
- տեղեկությունների հաղորդում հինգերորդ դարի հայ թարգմանական
- գրականության, առաջին թարգմանիչների մասին:

Ընթացք.

Գյումրու լեզուների տանը մասնագետը ծանոթացնելու է թարգմանական արվեստի տեսակներին, դրա գաղտնիքներին, ժամանակից հայ թարգմանիչների գործերիին կենտրոնի գործունեությանը:
Դասախոսությունից հետո ծավալել զրույց-քննարկում:

Ակնկալվող արդյունք.

✓ Ժամանակից թարգմանական արվեստին և հայ թարգմանիչների գործերին ծանոթացած և թարգմանական արվեստի կարևորությունը գնահատող ուսանողներ

Կազմակերպիչ՝ Մ. Եգանյան

Լուսաբանում

Սույն թվականի հոկտեմբերի 16-ին Սրբոց Թարգմանչաց տոնի կապակցությամբ Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանի I, II, III կուրսերի ուսանողներն այցելեցին Գյումրու Լեզուների Տուն: Նպատակն էր ուսանողներին ծանոթացնել թարգմանական արվեստի նրբություններին, մերօրյա թարգմանիչներին և նրանց գործունեությանը, ինչպես նաև հետաքրքրություն օտարալեզու գրականության հանդեպ:

Հանդիմանը հրավիրված էր ՇՊՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետի «Թարգմանչական գործ» բաժնի դասախոս Հ. Իսահակյանը, որը խոսեց թարգմանական արվեստի մասին, ուսանողներին ներկայացրեց նաև ժամանակակից թարգմանական գրականության առանձնահատկությունները, ծանոթացրեց թարգմանական գրականության տեսակներին: Նա նշեց, որ մեծագույն պատասխանատվությամբ պետք է վերաբերվել թարգմանվող նյութին՝ փորձելով հավատարիմ մնալ բնօրինակին: Եվ որպես օրինակ բերեց Աստվածաշնչի թարգմանությունը, որը մինչև այժմ մնում է անգերազանցելի: Գեղեցիկ և գրագետ թարգմանության համար պետք է փայլուն իմանալ այն լեզուն, որից թարգմանվում է: Սակայն թարգմանչի համար ամենակարևորը մայրենի լեզվի գերազանց իմացությունն է, ազգային լեզվամտածողությունը:

Դասախոսությունից հետո ծավալվեց աշխույժ քննարկում. որից հետո Հ. Իսահակյանը պատասխանեց ուսանողներին հետաքրքրող հարցերին, խորհուրդ տվեց մասնագիտություն ստանալուն զուգնթաց՝ տվորել նաև որևէ օտար լեզու, որպեսզի կարողանան դիմակայել ժամանակի մարտահրավերներին:

Այցելությունը նպաստեց ուսանողների մոտ ճանաչողական գիտելիքների հարստացմանը, գաղափար կազմել նորօրյա թարգմանիչների և նրանց գործունեության մասին:

Կազմակերպիչ՝ Մ. Եգանյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08. 2018թ.
Բնագիտամաթեմատիկական մ/մ նախագահ՝ Զ. Նահապետյան

Պլան
այցելության

Առարկա - կենսաբանություն
Անցկացման ամսաթիվը՝ 17.10. 2018թ.
Կուրս՝ II
Տիպը՝ ճանաչողա-ուսուցողական
Այցելության վայրը՝ «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ

Նպատակ

- Ծանոթացնել «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ- ի աշխատանքներին:
- Խորացնել գիտելիքները արյան խմբերի, արյան փոխներարկման և արյան միջոցով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ:
- Կարևորել դոնորական արյան անհրաժեշտությունը մարդկային կյանքերի փրկության գործում:
- Դաստիարակել մարդասիրություն և կամային որակ:

Նախապատրաստական փուլ

- ✓ Ձեռք բերել նախնական պայմանավորվածություն
- ✓ «Արյան բանկի» հետ ճշտել այցելության նպատակները

Ընթացք

- Ծանոթացում կայանի առաքելություններին և նպատակներին:
- Տեղեկատվություն արյան դոնորության մասին:
- Ծանոթացում դոնորական արյան հանձման գործընթացին:
- Ծանոթացում արյան պահեստավորման պայմաններին:

Այցելությունից հետո

- տպավորությունների կիսում

Ակնկալվող արդյունք
<Արյան փոխներարկում և արյան միջոցով փոխանցվող հիվանդություններ> թեմայից խորացված գիտելիքներով հարստացած և կամավորական սկզբունքներին գաղափարակից ուսանողներ:

Դասավանդող՝ Զ Նահապետյան

Լուսաբանում

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ

Հոկտեմբերի 17-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի երկրորդ կուրսի ուսանողներն այցելեցին Գյումրու արյան փոխներարկման կայան:

Այցի նպատակն էր դաստիարակել մարդասիրություն և կամային որակ, խորացնել ուսանողների գիտելիքները արյան խմբերի, արյան փոխներարկման և արյան միջոցով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ, ծանոթացնել նրանց կայանի աշխատանքային գործընթացին:

Արյան փոխներարկման կայանի տնօրեն Ա. Անդրիասյանը ուսանողներին ծանոթացրեց կայանի առաքելություններին և նպատակներին, դոնորական արյան հանձման գործընթացին, արյան պահեստավորման պայմաններին: Նա նշեց, որ կամավոր արյան դոնորությունը առողջ ապրելակերպի բաղադրամաս է, մարդասիրական քայլ և հասարակության հանդեպ բարոյական պարտք:

Ուսանողները ականատես եղան ուսումնարանի մաթեմատիկայի դասախոս Ռ. Պետրոսյանի՝ որպես գրանցված կամավոր դոնոր, արյան հանձնման ընթացքին, արյան բաղադրամասերի առանձնացմանը և պահեստավորմանը:

Մասնագետ բժիշկը որոշեց ուսանողներից մեկի արյան խումբը՝ քայլ առ քայլ ցուցադրելով ողջ գործընթացը:

Այցելությունից հետո անցկացվեց ստացած տպավորությունների բուռն քննարկում՝ կարևորելով կամավորական սկզբունքների գաղափարը:

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08.2018թ.
Մասնագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
այցելության

Մասնագիտություն՝ «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի»
Կուրս՝ III
Անցկացման ամսաթիվը՝ 25.10.2018 թ.
Տիպը՝ ճանաչողական
Այցելության վայրը՝ ««Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն» ՀԿ

Նպատակ

- Ծանոթանալ ՀԿ-ի նպատակներին, առաքելություններին
- Ծանոթանալ գործավարական փաստաթղթերի նմուշներին
- Կարևորել մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունը
- Համագործակցել կրթական կենտրոնի հետ
- Ընձեռել լրացուցիչ մասնագիտական կողմնորոշման հնարավորություն

Նախապատրաստական փուլ

- ✓ Ձեռք բերել նախնական պայմանավորվածություն
- ✓ Կենտրոնի հետ ճշգրտել այցելության նպատակները

Ընթացք

- Ծանոթացում էլեկտրոնային գրադարանին, էլեկտրոնային տվյալների բազային
- Գործավարական փաստաթղթաշրջանառության ուսումնասիրում և ժամանակակից գործավարության պահանջների իրազեկում
- Համակարգչային օպերատոր մասնագիտությամբ ուսանողներին մոտիվացնել «Համակարգչային գործավարություն» մոդուլի ուսուցման համար

Այցելությունից հետո

- Տպավորությունների կիսում /«օպերատոր համակարգչի» II կուրսի ուսանողների հետ/,
- Մասնագիտական կարողությունների և հմտությունների կիրառման հնարավորությունների մասին զրույց-քննարկում0

Ակնկալվող արդյունք
Գործավարական փաստաթղթավարությանը իրազեկված ուսանողներ, այլ մասնագիտությունների նկատմամբ կողմնորոշվածություն ունեցող ուսանողներ:

Դասավանդող՝ Ա.Մարգարյան

Լուսաբանում

Ուսուցողական այց
«Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն» ՀԿ

Ս/թ հոկտմբերի 25-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի 14 ուսանողներ այցելեցին՝ ««Ալվան ծաղիկ» սոցիալ- կրթական կենտրոն» ՀԿ:

Այցելության նպատակն էր.

- ծանոթանալ ՀԿ-ի նպատակներին, առաքելություններին,
- ծանոթանալ գործավարական փաստաթղթերի նմուշներին,
- կարևորել մասնագիտական գիտելիքների կիրառման հնարավորությունը
- համագործակցել կրթական կենտրոնի հետ,
- ընձեռել լրացուցիչ մասնագիտական կողմնորոշման հնարավորություն:

ՀԿ նախագահ Լ.Գյունաշյանը համառոտ ներկայացրեց ՀԿ-ի նպատակները, առաքելությունները և ծավալած գործունեությունը: Ցուցադրվեց գործավարական փաստաթղթերի նմուշներ, որից հետո ծավալվեց հետաքրքիր մասնագիտական զրույց-քննարկում ժամանակակից գործավարության պահանջների մասին:

Հետաքրքրական էր նաև էլեկտրոնային գրադարանի հնարավորություններին և տվյալների բազային ծանոթացումը:

Սոցիալ-կրթական կենտրոնի հետ արդյունավետ և նպատակային համագործակցություն ապահովելու նպատակով ուսանողներն իրենց ստեղծած «Անգլերեն այբուբենը մանուկների համար» թեմայով նրբաճաշակ և ուսուցողական սահիկաշարը նվիրեցին կենտրոնի սաներին: Ըստ Լ.Գյունաշյանի՝ դա բարի կամքի դրսևորման գեղեցիկ ձև էր, ինքնատիպ նախաձեռնություն և համագործակցության նոր մեկնարկ:

Այցելության ավարտին ուսանողներն կիսեցին իրենց կարծիքներն ու տպավորությունները՝ նշելով, որ նմանօրինակ այցելությունները նպաստում են ընդհանուր և մասնագիտական գիտելիքների զարգացմանը, ընձեռում հնարավորություն՝ լրացուցիչ մասնագիտություն ընտրելու հարցում:

Դասախոսող՝ Ա.Մարգարյան

Ծրագիր

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08. 2018թ
Հումանիտար մ/մ նախագահ՝ Ք. Գրիգորյան

Պլան

«Հայկական ազատամարտի ու ֆիդայական շարժումը Հայաստանի Առաջին Հանրապետության կայացման տարիներին» խորագրով բաց դասի

Վայրը՝ Գյումրու «Հայկական ազատամարտի ու ֆիդայական շարժման» պուրակ
Անցկացման ժամանակ՝ հոկտեմբեր
Պատասխանատու՝ Ա. Պետրոսյան

Նպատակը

1. Ծանոթացնել 20-րդ դարի սկզբի ֆիդայական շարժման կարկառուն դեմքերին
2. Արժևորել ֆիդայական շարժումը որպես Հայաստան աշխարհի անկախության ձեռքբերման և Առաջին Հանրապետության հիմնադրման նախապայման:

Նախապատրաստական փուլ

Ուսանողներին հանձնարարել կատարել հետազոտական աշխատանքներ թեմայի վերաբերյալ և կազմել զեկույցներ:

Ընթացքը.

1. այցելություն Գյումրու «Հայկական ազատամարտի ու ֆիդայական շարժման» պուրակ
2. ծաղիկների խոնարհում ֆիդայական շարժման հերոսների հիշատակին
3. հայկական ազատամարտի և ֆիդայական շարժման հերոսների ներկայացում
4. արժևորել և գնահատել ֆիդայական շարժման կարևոր դերը ազգային ազատագրական պայքարում
5. գնահատել Ֆիդայիների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը Առաջին համաշխարհային պատերազմում կամավորական ջոկատների ստեղծման գործում

Ակնկալվող արդյունք

Ֆիդայական շարժմանը ծանոթ, հայրենասեր, սեփական պատմությանը տեղյակ, հայրենիքի պաշտպանության գործին պատրաստ ուսանողներ

Պատմության դասախոս՝ Ա. Պետրոսյան

Լուսաբանում

Ուսանողներն այցելեցին Գյումրու Հայկական ազատամարտի ու ֆիդայական շարժման պուրակ

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի երկրորդ կուրսի՝ ուսանողները /թվով՝ 18/այցելեցին Գյումրու Հայկական ազատամարտի ու ֆիդայական շարժման պուրակ: Այցելությունը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման 100–ամյակին: Նպատակն էր ուսանողներին ծանոթացնել Հայոց ազատագրական պայքարի պատմությանը, 20-րդ դարի սկզբի ֆիդայական շարժման կարկառուն դեմքերին, բարձրացնել սաների ռազմահայրենասիրական ոգին, հերոսների օրինակով ձևավորել հայրենիքը պահելու պատրաստակամություն, դժվարություններին դիմակայելու և հաղթահարելու կամք:

Միջոցառման սկզբում ուսանողները ծաղիկներ խոնարհեցին ֆիդայական շարժման հերոսների կիսանդրիների առջև՝ ի նշան երախտագիտության:

Նրանք հանգամանորեն ներկայացրին հայկական ազատամարտի և ֆիդայական շարժման հերոսներին՝ Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Սոսե Մայրիկին, Զորավար Անդրանիկին, Գյումրեցի Պետոյին, Գարեգին Նժդեհին և մյուս արժանավոր ֆիդայիներին՝ նշելով ֆիդայական շարժման ազգապահպան դերը բոլոր ժամանակներում, ինչպես նաև Մայիսյան հերոսամարտերում ցուցաբերած նրանց անօրինակ սխրանքները՝ Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործում:

Հայոց լեզվի և գրականության դասախոս Ք. Գրգորյանը հետաքրքիր դեպքեր պատմեց զորավար Մախլուտոյի կյանքի վերջին տարիներից:

Ուսանողները ծաղիկներ խոնարհեցին ֆիդայական շարժման հերոսների կիսանդրիներին: Այցելությունն եզրափակվեց երկրորդ կուրսի ուսանող Տարոն Ղազարյանի հայրենասիրական խրոխտ երգով:

Կազմակերպիչ՝ Ա. Պետրոսյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08. 2018թ
Հումանիտար մ/մ Նախագահ՝ Ք. Գրիգորյան

Պլան
Ասլմազյանների տուն-թանգարան այցելության

Կուրս- առաջին

Առարկա –Հասարակագիտություն

Այցելությունը կազմակերպվում է հասարակագիտություն առարկայի <Գեղագիտություն> բաժնի ուսումնասիրման շրջանակներում:

Այցելության նպատակը.

- ավելի պատկերավոր դարձնել գեղեցիկի ընկալումը,
- ուսանողներին ծանոթացնել արվեստի արտահայտչաձևերից՝ գեղանկարչության հետ,
- սովորողների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ, սեր արվեստի և գեղեցիկի հանդեպ,
- ուսանողներին ծանոթացնել մշակութային քաղաք՝ Գյումրու արվեստի ներկայացուցիչներից Ասլամազյան քույրերի ստեղծագործությունների հետ:

Այցելությունից հետո կատարել քննարկում՝ թանգարանում ներկայացված նմուշների վերաբերյալ՝ ոճային ուղղությունները, արտահայտչաձևերը, գեղագիտական իդեալը:

Ակնկալվող արդյունք.

- գեղագիտական ճաշակ ունեցող,
- գեղեցիկը արժևորող, գեղանկարչության ոճերը տարբերակող,
- գյումրեցի արվեստագետների աշխատանքները ճանաչող ուսանողներ:

Կազմակերպիչ՝ Ա. Աղաբաբյան

Լուսաբանում

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի թանգարան այցելության հաշվետվություն

Սույն թվականի նոյեմբերի 8-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի առաջին կուրսերի ուսանողներն այցելեցին Գյումրու Երանուհի և Մարիամ Ասլամազյանների թանգարան:Այցելությունը կազմակերպվել էր հասարակագիտություն առարկայից «Գեղագիտություն» բաժնի ուսումնասիրման շրջանակներում՝ գեղեցիկի ընկալումը ավելի պատկերավոր դարձնելու համար:

Թանգարանի գիդը հանգամանորեն ներկայացրեց Ասլամազյան քույրերի կյանքն ու գործունեությունը, ծանոթացրեց յուրաքանչյուր սրահում ցուցադրված աշխատանքների թեմատիկային,գեղանկարչության և քանդակագործության նմուշներին: Իրենց ինքնատիպությամբ ուսանողներին գրավեցին հատկապես Ասլամազյան քույրերի կողմից ստեղծված խեցեգործական աշխատանքները:

Արդյունքում ուսանողները ծանոթացան Ասլամզյան քույրերի ստեղծագործական աշխարհին, գնահատեցին այդ ստեղծագործությունները՝ որպես մշակութային բարձր արժեքներ,որոնք շնչում էին հայաստանյան գույներով ու երանգներով:

Կազմակերպիչ՝ Ա.Աղաբաբյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08.2018թ.
Մասնագիտական /մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
Այցելության

Մասնագիտություն՝ « Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ»

Կուրս՝ II

Անցկացման ամսաթիվը՝ 15.11.2018 թ.

Այցելության վայրը՝ Գյումրու «**Լենտեքս**» գործարան

Նպատակ

- Ծանոթանալ գործարանի ժամանակակից սարքավորումներին,
- Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները,
- Անցկացնել խորհրդատվություն և վարպետության դաս՝ գործարանի արհեստանոցի վարպետ մասնագետների կողմից

Նախապատրաստական փուլ

Ձեռք բերել պայմանավորվածություն գործարանի հետ՝ իրագործելով այցելության նպատակները

Ընթացք

- *Վարպետ-մասնագետների կողմից.*

✓ ուսանողներին ներկայացնել գործարանի աշխատատեղերի ճիշտ կազմակերպման ձևերը և անվտանգության տեխնիկայի կանոնները,

✓ անցկացնել խորհրդատություն և վարպետության դաս,

- *Իրականացնել որևէ սարքավորման վերանորոգման աշխատանք,*
- *Քննարկել և պարզաբանել առաջացած ընթացիկ հարցերը:*

Ամփոփում

Ստացած տպավորությունների կիսում և քննարկում:

Ակնկալվող արդյունք

Մասնագիտական լրացուցիչ մասնագիտական գիտելիքներով և փորձով հարստացած ուսանողներ:

Դասավանդող՝ Ա.Նազարյան

Լուսաբանում

Գյումրու «Լենտեքս» գործարան այցելության

Ս/թ նոյեմբերի 15-ին «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» II կուրսի 15 ուսանողներ այցելեցին

Այցելության նպատակն էր.

- ծանոթանալ գործարանի ժամանակակից սարքավորումներին,
- զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները,
- գործարանի արհեստանոցի վարպետ մասնագետների կողմից անցկացնել խորհրդատվություն և վարպետության դաս:

Գյումրու «**Լենտեքս**» գործարան արտադրության պետ և անվտանգության ինժեներ տկն.Աստղյանը ուսանողներին ներկայացրեց գործարանի տարբեր արտադրամասերում /ներկման, գործման, փաթեթավորման և այլն/ իրականացվող արտադրական գործընթացները, դրանց ճիշտ կազմակերպման ձևերը և անվտանգության տեխնիկայի կանոնները:

Ուսանողներն ուսումնասիրեցին նաև գործարանի անսարք վիճակում գտնվող ժամանակակից սարքավորումները /ԹԾԿՀ/ և մասնակիորեն մասնակցեցին դրանց վերանորոգման գործընթացներին:

Տարբեր արտադրամասերում շահագործվող սարքավորումների աշխատանքային գործընթացներն ուսումնասիրելու ընթացքում ապագա ռադիոմեխանիկների մոտ առաջացան մասնագիտական հարցեր, որոնք քննարկվեցին և պարզաբանվեցին համապատասխան մասնագետների կողմից:

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով և փորձով հարստացած ուսանողներն իրենց տպավորությունները կիսեցին արտադրական ուսուցման դասաժամին՝ նշելով որ այն որպես վարպետության դաս խիստ գործնական էր և արդյունավետ:

Կազմակերպիչ՝ արտադրական ուսուցման վարպետ Ա.Նազարյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
29.08.2018թ.
Հումանիտար մ/մ նախագահ՝ Ք. Գրիգորյան

Պլան
<Նժդեհ> ֆիլմի դիտման-քննարկման

Վայրը՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան
Ժամանակ՝ նոյեմբեր
Պատասխանատու՝ Ք. Գրիգորյան, Ա. Պետրոսյան
Նպատակը

- ✓ Ծանոթացնել հայ ժողովրդի մեծագույն զավակ Գարեգին Նժդեհի կենսագործունեությանը,
- ✓ արժևորել Գ. Նժդեհի դերը Հայաստանի առաջին հանրապետության կայացման, Սյունիքի՝ որպես Հայաստանի անբաժանելի մաս կազմելու գործում:

Նախապատրաստական փուլ
Ուսանողներին հանձնարարել տարբեր աղբյուրներից դուրս բերել տեղեկատվություն Գարեգին Նժդեհի հայրենանվեր գործի, քաղաքական հայացքների և Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակի մասին:

Ընթացքը

1. Համառոտ ներկայացնել Նժդեհի՝ Գարեգին Տեր-Հարությունյանի կյանքը, անցած հերոսական ուղին:
2. Կազմակերպել <Նժդեհ> ֆիլմի դիտում:
3. Անցկացնել քննարկում.
   - Նժդեհը հայրենասիրության,ազատության նվիրյալի վառ օրինակ,
   - Նժդեհի հայացքները հայրենիքի, ազգային արժանապատվության պահպանման, ազատության, հայրենասիրության մասին,
   - Գնահատել Նժդեհի իրական կերպարը և ֆիլմի մատուցումը:

Ակնկալվող արդյունք

- Ազգի մեծագույն հերոսներին գնահատող և արժևորող,
- իր մեջ Նժդեհ տեսնելու ցանկությամբ օժտված հայրենասեր ուսանողներ:

Հումանիտար մեթոդմիավորման նախագահ՝ Ք. Գրիգորյան

Լուսաբանում

«Գարեգին Նժդեհ» ֆիլմի դիտում

Նոյեմբերի 16-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում անցկացվեց «Գարեգին Նժդեհ» ֆիլմի դիտում:

Նպատակն էր ուսանողներին ծանոթացնել Գարեգին Նժդեհի կյանքին, քաղաքական հայացքներին և նրա ազգանվեր գործունեությանը: Արժևորել նրա անուրանալի դերը Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործում:

Ֆիլմի դիտումից հետո ծավալվեց քննարկում. արդյունքում ուսանողները ճիշտ պատկերացում կազմեցին հայ ժողովրդի համար պատմական այդ կարևոր ժամանակահատվածում հայ նշանավոր զինվորական և քաղաքական գործիչների դիրքորոշման մասին:

Հայոց պատմության դասախոս Ա.Պետրոսյանը, ամփոփելով ուսանողների արտահայտած մտքերը, հավելեց. բոլորի պարտքն է ճանաչել և ըստ արժանվույն մեծարել հայրենիքի նվիրյալներին, այդ թվում Գարեգին Նժդեհին, որի համար միակ սրբությունը հայրենիքն էր, գերագույն նպատակը՝ ազատ, անկախ պետականություն ունենալը:

Պատասխանատուներ՝ Ա. Պետրոսյան

Ք. Գրիգորյան

Ֆիլմի դիտում՝«Գարեգին Նժդեհ»

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
31.08.2018թ.
Մասնագիտական մ/մ նախագահ՝ Ա.Մարգարյան

Պլան
այցելության

Մասնագիտություն՝ «Խոհարարական գործ՝ խոհարար»
Կուրս՝ միասյա
Տիպը՝ ուսումնա-ճանաչողական
Այցելության վայրը՝ Գյումրու «Էմիլի Արեգակ» կենտրոն
Նպատակ

- Ծանոթացնել Գյումրիում գործող հասարակական սննդի ոլորտի կազմակերպություններից մեկի աշխատանքային գործունեությանը, խոհանոցի կահավորմանը, արտադրական խոհարարական սարքավորումներին և պարագաներին
- Ծանոթացնել կենտրոնի խոհանոցում տիրող աշխատանքային ոճին, սանիտարահիգիենիկ պայմաններին
- Ամրապնդել ուսանողների ձեռք բերած գիտելիքները և նրանց մոտիվացնել մասնագիտության կարևորությանը

Նախապատրաստական փուլ
Ձեռք բերել նախնական պայմանավորվածություն՝ իրագեկելով այցելության նպատակները
Ընթացք
Ուսանողները ծանոթանում են.

- խոհանոցի կահավորմանը, արտադրական խոհարարական սարքավորումներին և պարագաներին, սանիտարահիգիենիկ նորմերին, անվտանգության տեխնիկայի կանոններին, աշխատատեղի ճիշտ կազմակերպմանը, ճաշացանկին,
- պատվերների ճիշտ ընդունման կարգին և հանձնման գործընթացին,
- խոհարարական աշխատանքների իրականացման ժամանակ աշխատանքային ռիթմին և հաղորդակցությանը:

Այցելությունից հետո
Տպավորությունների կիսում և մասնագիտական քննարկում
Ակնկալվող արդյունք
Հասարակական սննդի ոլորտի կազմակերպությանը, խոհարարական աշխատանքային ոճին և խոհանոցային ռիթմին ծանոթ, մասնագիտությունը արժևորող ուսանող:

Դասավանդող՝ Մ.Լավազանյան

Լուսաբանում

Ս/թ նոյեմբերի 20-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ միամյա կուրսի 19 ուսանողներ այցելեցին Գյումրու «ԷՄԻԼԻ ԱՐԵԳԱԿ» կենտրոն: Նպատակն էր.

- ծանոթացնել հաստատության խոհանոցում տիրող աշխատանքային ռճին, խոհանոցի կահավորմանը, արտադրական խոհանոցային նոր սարքավորումներին և պարագաներին,
- համագործակցել կազմակերպության հետ:

Կենտրոնի ծրագրերի պատասխանատու Մ.Աթայանը ուսանողներին ներկայացրեց կենտրոնի ստեղծման պատմությունը, աշխատանքային ռճի առանձնահատկությունները:

Խոհարարի կողմից ուսանողներին ներկայացվեց կենտրոնի խոհանոցում տիրող աշխատանքային ռճը, խոհանոցի ճիշտ կահավորման նորմերը, խոհանոցային /արտադրական/ ժամանակակից սարքավորումները և պարագաները, ինչպես նաև դրանց աշխատանքի սկզբունքները: Ուսանողները ծանոթացան պատվերի ընդունման և հանձման կարգին, խոհանոցային հիգիենայի պահպանման պահանջներին:

Նրանք տպավորված էին այցելությունից և սեփական տեսակետներն ու կարծիքները հայտնեցին այցելություն մասին:

Կազմակերպիչ՝ Մ.Լափազանյան

Նկարադարան

Լուսաբանում

Նոյեմբերի 16-17-ը անցկացվեց «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթը, որտեղ փայլուն հանդես եկան Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ոսկերչություն» մասնագիտության ուսանողները:

Երկրորդ կուրսի ուսանող Գառնիկ Ղոջոյանը 75 միավորով զբաղեցրեց V տեղ: Երրորդ կուրսի ուսանող Իշխան Սահակյանը 76 միավորով գրավեց IV տեղ: Երկրորդ կուրսի ուսանող Սարգիս Գասպարյանը 82 միավորով զբաղեցրեց II տեղ՝ արժանանալով արծաթե մեդալի, իսկ երկրորդ կուրսի ուսանող **Մնացական Գալստյանը,** ցուցադրելով մասնագիտական գերազանց կարողություններ, հմտություններ, 100 միավորից հավաքելով 96 միավոր տարավ բացառիկ հաղթանակ և զբաղեցրեց առաջին հորիզոնականը՝ արժանանալով ոսկե մեդալի:

Նոյեմբերի 29-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի ունեցավ «Հայաստանի հմտություններ» ազգային 6-րդ մրցույթի մասնակիցների մրցանակաբաշխության արարողությունը: Մասնակիցներին ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից շնորհվեցին վկայականներ: Մասնակիցներին և հաղթողներին մեդալներ ու պարգևներ են տրվել ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի կողմից:

Մնացական Գալստյանը, ՌԴ Կազան քաղաքում 2019 թվականին կայանալիք «Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթում կներկայացնի Հայաստանը:

Մրցույթի ազգային փուլի ամփոփումից հետո արդյունքները բաշխվել են հետևյալ կերպ.

1. Գալստյան Մնացական - Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան՝ 96 միավոր, I տեղ
2. Գասպարյան Սարգիս – Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան՝ 82 միավոր, II տեղ
3. Ավետիսյան Սուրեն - Երևանի տարածաշրջանային թիվ 1 քոլեջ՝ 80 միավոր, III տեղ
4. Սահակյան Իշխան – Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան՝ 76 միավոր, IV տեղ
5. Ղոջոյան Գառնիկ – Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան՝ 75 միավոր, V տեղ